



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

**Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց
փորձաքննության իրականացման կարգն ու պայմանները**

Իրավական հետազոտություն

Սույն հետազոտությունն իրականացնելու համար «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն իր շնորհակալությունն է հայտնում կազմակերպության կամավորներ **Անի Վարդերեսյանին** և **Լիլիթ Նաղաշյանին**

Երևան, 2014



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

ՆԱԽԱԲԱՆ	3
1.Փորձաքննության տեսակները, դրանց առանձնահատկությունները.....	5
2. Հոգեբուժական փորձաքննության տևողությունը.....	6
3. Անձին անգործունակ ճանաչելու համար իրականացվող փորձաքննության տևողությունը	7
4. Փորձաքննություն իրականացնող մարմինները.....	7
5. Փորձաքննություն իրականացնող մարմինների ձևավորման կարգը	10
6.Փորձաքննության մարմինների ձևավորմանն ու գործունեությանն առաջադրված սկզբունքներն ու պայմանները.....	12
7.Ի՞նչ մեթոդներով է իրականացվում կամ պետք է իրականացվի փորձաքննությունը.....	16
8. Փորձաքննության մարմինների կազմին առաջադրվող պահանջները.....	17
9. Փորձաքննության իրականացման հիմքը.....	18
10.Ինչ ժամկետներ են առաջադրված դիմում ներկայացնելու համար.....	18
11.Ու՞մ է ներկայացվում փորձաքննության արդյունքները:.....	19
12.Ինչպե՞ս է ո՞վ կարող է բողոքարկել փորձաքննության արդյունքները.....	20
13.Ո՞վ կարող է պահանջել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն	21
14.Փորձաքննության վերանայման կարգն ու պայմանները.....	21
Եզրահանգումներ.....	22



ՆԱԽԱԲԱՆ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը առողջությունը դիտարկում է իբրև «լիակատար ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ, ոչ թե միայն հիվանդության կամ հաշմանդամության բացակայություն¹»: Այնուհետև, սահմանում է հոգեկան առողջությունը, որպես բարեկեցության վիճակ, որում անհատը իրացնում է իր կարողությունները, կարողանում է հաղթահարել առօրյա նորմալ սթրեսները, կարողանում է աշխատել արդյունավետ և բեղուն, ինչպես նաև ունակ է ներդրում ունենալ հասարակության մեջ:

Բնակչության հոգեկան առողջության պահպանումը դիտելով որպես կայուն, ապահով և բարեկեցիկ հասարակության զարգացման նախապայման՝ պետության կարևորագույն խնդիրն է ստանձնել որոշակի պարտականություններ նաև այս ոլորտում մարդու իրավունքների լիարժեք իրացման և պաշտպանության նպատակով:

Հոգեկան առողջության վերաբերյալ օրենսդրության առկայությունը անհրաժեշտ է հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար, որոնք համարվում են հասարակության համեմատաբար խոցելի խումբ: Վերջին 10-15 տարիների ընթացքում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների, բուժման մեթոդների և մոտեցումների կապակցությամբ տեղի են ունեցել մի շարք կարևոր եվրոպական, ինչպես նաև համաշխարհային զարգացումներ: Այդ զարգացումներից պետք է առանձնացնել 2005թ. ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կովենցիայի ընդունումը, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի հրապարակած մի շարք առաջարկներ, որոնք սահմանում են հոգեկան խանգարումներ ունեցող անձանց վերաբերյալ հստակ ձևակերպած համաեվրոպական չափանիշներ, ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային որոշումներ՝ հատկապես նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի երկրների համար:

Հոգեկան առողջության վերաբերյալ օրենսդրության կարևոր մաս պետք է կազմի նաև հոգեկան առողջության և հոգեկան խանգարումների մակարդակի գնահատման փուլի կարգավորումը: Հոգեկան խանգարման ախտորոշման առկա ձևերը խիստ անհստակ են և չեն տարբերում խնդիրներ ունեցող մարդկանց առողջ մարդկանցից, ինչպես նշում է ամերիկացի հոշակավոր հոգեբան Դեյվիդ Ռոզենհանն 1973թ. հրապարակված իր՝ «Անմեղսունակ

¹ WHO, Investing in Mental Health, 2003



վայրերում մեղսունակ լինելու մասին» հոդվածում²: Հաշվի առնելով խնդրի լրջությունը նաև մեր օրերում՝ հոգեբուժական փորձաքննության իրականացման իրավական կարգավորումը թույլ կտա հնարավորինս խուսափել անձանց իրավունքների խախտման հետ կապված խնդիրներից:

Հետևաբար, հաշվի առնելով հոգեկան առողջության ոլորտում ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի թերությունները՝ սույն հետազոտության շրջանակներում կփորձենք՝

1. բացահայտել ՀՀ-ում իրականացվող հոգեբուժական փորձաքննության օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի կարգը;
2. գնահատել դրանց համապատասխանելիությունը միջազգային ստանդարտներին:

Անդրադարձ կկատարվի հոգեբուժական փորձաքննության տեսակներին, դրանց առանձնահատկություններին, անձին անգործունակ ճանաչելու համար իրականացվող փորձաքննության տևողությունը, փորձաքննություն իրականացնող մարմիններին, դրանց ձևավորմանն և գործունեության կարգին, առաջադրվող պահանջներին, փորձաքննության իրականացման հիմքերին և ժամկետներին, փորձաքննության արդյունքում կազմված փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, դրանց բողոքը կման և վերանայման կարգին, ինչպես նաև նշված ոլորտում միջազգային կարգավորումներին և ստանդարտներին:

² On Being Sane In Insane Places, David L. Rosenhan



1. Փորձաքննության տեսակները, դրանց առանձնահատկությունները

Համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կետ 5-ի՝ «հոգեբուժական օգնություն հասկացությունը բնորոշվում է որպես՝ հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային ձևերով հոգեկան խանգարումով տառապող անձին տրամադրվող բժշկական խորհրդատվություն կամ հետազոտում կամ ախտորոշում կամ բուժում կամ խնամք ու սոցիալական վերականգնում կամ հոգեբուժական փորձաքննություն»: Հետևաբար հոգեբուժական փորձաքննությունը հանդիսանում է հոգեբուժական օգնության և սպասարկման առանձին տեսակ:

Հոգեբուժական փորձաքննության տեսակները սահմանված են ՀՀ կառավարության հոգեբուժական օգնության և սպասարկման տեսակների ցանկն ու կառուցվածքը հաստատելու մասին 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ N 1686-Ն որոշմամբ: Ըստ նշված որոշման՝ առանձնանում են հոգեբուժական փորձաքննության հետևյալ տեսակները.

1. Դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն
2. Դատահոգեբուժական ստացիոնար փորձաքննություն
3. Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն
4. Բժշկասոցիալական փորձաքննություն
5. Ռազմաբժշկական փորձաքննություն

Իր հերթին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը տալիս է բժշկական փորձաքննության սահմանումը և թվարկում դրա ձևերը:

Համաձայն նշված օրենքի **հոդված 22-ի՝** մարդկանց առողջական վիճակի որոշման նպատակով հիվանդության, վնասվածքի, աշխատունակության կորստի և այլ դեպքերում կատարվում է բժշկական փորձաքննություն:

Բժշկական փորձաքննության ձևերն են՝

- ժամանակավոր անաշխատունակության,
- բժշկասոցիալական,
- ռազմաբժշկական,
- դատաբժշկական,
- ախտաբանաանատոմիական:

Նույն հոդվածը տալիս է նաև յուրաքանչյուր տեսակի նկարագրությունը, այսպես.

Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննությունը որոշում է մարդու աշխատանքից ժամանակավոր ազատման անհրաժեշտությունը և ժամկետները՝



պայմանավորված աշխատողի առողջական վիճակով, նրա ժամանակավոր կամ մշտապես այլ աշխատանքի փոխադրումը, ինչպես նաև մարդու բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման հարցը:

Բժշկասոցիալական փորձաքննությունը որոշում է մարդու աշխատունակության կորստի աստիճանը, հաշմանդամության խումբը և պատճառը, սահմանում է նրա բժշկական, սոցիալական, աշխատանքային վերականգնման տեսակները, ծավալը և անցկացման ժամկետները, տալիս է երաշխավորություն աշխատանքի տեղավորման համար:

Ռազմաբժշկական փորձաքննությունը որոշում է զինվորական ծառայության անցնելու ենթակա քաղաքացիների, զինծառայողների, պահեստագործի զինծառայողների առողջական վիճակով պայմանավորված զինծայության պիտանիությունը, հաստատում է զինծառայողների և զինծառայությունից արձակվածների հիվանդությունների, վնասվածքների պատճառահետևանքային կապը զինծառայության հետ, սահմանում է բժշկական, սոցիալական, աշխատանքային վերականգնման իրականացման տեսակները, ծավալը և ժամկետները:

Դատաբժշկական փորձաքննությունն իրականացվում է իրավասու մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Բժշկական փորձաքննության իրականացման, վիճելի դեպքերում կրկնական, լրացուցիչ, ինչպես նաև անկախ բժշկական փորձաքննության անցկացման, բժշկական փորձաքննության եզրակացության դատական կարգով գանգատարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Ախտաբանաանատոմիական փորձաքննությունն իրականացվում է համապատասխան որակավորում ունեցող մասնագետի և այլ բժշկական մասնագետների մասնակցությամբ ախտաբանական հետազոտությունների արդյունքների և կլինիկական տվյալների համադրման և վերջնական ախտորոշման հաստատման նպատակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի:

2. Հոգեբուժական փորձաքննության տեւողությունը

ՀՀ օրենսդրական համապատասխան կարգավորումները նշում չեն պարունակում կոնկրետ ժամկետների մասին, որոնց շրջանակներում պետք է իրականացվի հոգեբուժական փորձաքննությունը: Այնուամենայնիվ “Հոգեբուժական օգնության մասին” ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից հիվանդի դուրսգրման հիմք է սահմանում նաև հետազոտման կամ փորձաքննության ժամկետների ավարտվելը: Այս



պարագայում ակնայտ է օրենսդրական բացը, որը, ըստ երևույթին, պետք է լրացվի Կառավարության որոշմամբ, ինչը բխում է նույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասից՝ *ստացիոնար և ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

3. Անձին անգործունակ ճանաչելու համար իրականացվող փորձաքննության տևողությունը

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ գլուխը կարգավորում է քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու գործերով վարույթը: Մասնավորապես, ՀՀ Քաղ. Դատ. Օր-ի 170-րդ հոդվածի համաձայն՝ *քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար, նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն:* Դատահոգեբուժական փորձաքննության անցկացումից այն անձի ակնհայտ խուսափելու դեպքում, որի նկատմամբ անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործ է հարուցվել, դատարանը որոշում է կայացնում քաղաքացուն հարկադիր կարգով դատահոգեբուժական փորձաքննության ուղարկելու մասին:

Հարկ է նշել, որ քաղ.դատ.օր-ը նշում չի պարունակում այն մասին, թե ինչ ժամկետներում է այն իրականացվում: Դեռևս սահմանված չէ նաև վերջինիս իրականացման կարգը, սակայն «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ այն սահմանելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Ներկայումս դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է ընդհանուր կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված ընթացակարգերով:

4. Փորձաքննություն իրականացնող մարմինները

Անդրադառնալով փորձաքննություն իրականացնող մարմիններին՝ պետք է նշել, որ ըստ ՀՀ Առողջապահության նախարարի «*Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ել սպասարկման շրջանակներում հոգեբուժական օգնության կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին*» N 49-Ն հրամանի (18 սեպտեմբերի 2013թ)՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց **դատահոգեբուժական**



փորձաքննությունն ու հարկադիր բուժումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով բժշկական օգնության և սպասարկման համապատասխան լիցենզիա ունեցող **բժշկական կազմակերպություններում**: Հոգեկան խանգարումներով տառապող հիվանդների խնամքն իրականացվում է **հոգեբույժի եզրակացությամբ** և ուղեգրով՝ բժշկական օգնության և սպասարկման համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում:

Համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 9-րդ կետի՝ **հոգեբուժական կազմակերպությունը**՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական հաստատություն է, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական և հոգեթերապևտիկ օգնության ու ծառայությունների իրականացումը:

ՀՀ կառավարության հոգեբուժական օգնության և սպասարկման տեսակների ցանկն ու կառուցվածքը հաստատելու մասին 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ N 1686-Ն որոշմամբ՝ Հիվանդանոցային հոգեբուժական ծառայությունը Հայաստանում իրականացվում է **7 հոգեբուժական կազմակերպությունների** («Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերություն, «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, «Լոռու մարզային հոգեկայրաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն, «Ակադեմիկոս Արսեն Հայրիյանի անվան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն, «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության «Սթրես» հոգեկան առողջության վերականգնողական բաժանմունք), մեկ տուն-ինտերնատի՝ ՀՀ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Արմենիա» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փսիխոսոմատիկ բաժանմունք, «Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության հոգեբուժական բաժանմունք, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կազմում գործող մանկական հոգեբուժական դիսպանսերի, մարզերի պոլիկլինիկաների հոգեբույժի կաբինետների և Երևանի որոշ պոլիկլինիկաների փսիխոթերապևտիկ կաբինետների միջոցով:

Արտահիվանդանոցային ծառայությունն իրականացվում է **5 հոգեբուժական կազմակերպությունների կազմում գործող բաժանմունքների և 21 տարածաշրջանային պոլիկլինիկաների հոգեբուժական կաբինետների կողմից**:



Ընդգրկված լինելով Հայաստանի Հանրապետությունում թույլատրվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկում՝ համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, այն ենթակա է լիցենզավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշմամբ սահմանված կարգով: Ըստ այդմ, հոգեբուժական հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներին լիցենզավորման համար ներկայացվող տեխնիկա-տեխնոլոգիական և որակավորման պարտադիր պայմանները և պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1936-Ն որոշմամբ:

Համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝

1. Բժշկական ցուցումներից ելնելով՝ հոգեբուժական կազմակերպությունները հոգեկան խանգարումով տառապող անձի նկատմամբ արտահիվանդանոցային ձևով իրականացնում են բժշկական խորհրդատվություն կամ փորձաքննություն կամ ախտորոշում կամ բուժում՝ **անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմելու դեպքում:**

2. Տեսական (քրոնիկ) հոգեկան խանգարումներով տառապող անձի նկատմամբ, **իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն**, իրականացվում է դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն, որը ներառում է հաշվառում և շարունակական հսկողություն ու բուժում կամ սոցիալական վերականգնում կամ հոգեբուժական փորձաքննություն:

3. Դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությունը իրականացնելու կամ դադարեցնելու մասին որոշումը կայացնում է հոգեբուժական օգնություն իրականացնող հաստատությունում **ստեղծվող հոգեբուժական հանձնաժողովը**, որի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Ըստ նույն օրենքի՝ **հոգեբուժական հանձնաժողովը** 3 կամ ավելի հոգեբույժներից, անհրաժեշտության դեպքում նաև նյարդաբանից կազմված մասնագետների խումբ է (նրանցից մեկը հրավիրվում է այլ բժշկական հաստատությունից), որը ստեղծվում է հոգեբուժական կազմակերպության տնօրենի հրամանով և իրավասու է տալ անձի հոգեկան վիճակի ու դրանից բխող բոլոր բժշկական հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն:

Հոգեբուժական հանձնաժողովի կամ հետազոտող բժշկի կայացրած որոշումները պետք է լինեն պատճառաբանված և պարտադիր ամրագրվեն բժշկական փաստաթղթերում: Նշված հիմքերով իրավունքների սահմանափակման մասին նույն օրը իրազեկվում է հոգեկան հիվանդությամբ տառապող անձը, և համապատասխան գրառում է կատարվում բժշկական



փաստաթղթերում: Նշված հիմքերի վերացման դեպքում հոգեբուժական կազմակերպությունը պարտավոր է նույն օրը սահմանափակումների վերացման մասին տեղեկացնել հիվանդին՝ համապատասխան նշում կատարելով բժշկական փաստաթղթերում:

Քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հիվանդին և նրա օրինական ներկայացուցչին նրանց պահանջով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Հոգեբուժական հետազոտման տվյալները և եզրակացությունը գրանցվում են **բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում)**³:

5. Փորձաքննություն իրականացնող մարմինների ձևավորման կարգը

Համաձայն ՀՀ կառավարության միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին (4 դեկտեմբերի 2003 թվականի N 1636-Ն) որոշման՝

*Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ ճանաչելու, կալանավորված անձի նկատմամբ հոգեկան առողջական վիճակի պատճառով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության կամ հոգեկան առողջական վիճակի պատճառով պատժից ազատելու, ինչպես նաև բժշկական՝ հոգեբուժական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը կից դատահոգեբուժական փորձաքննության հանձնաժողովի կողմից իրականացվող դատահոգեբուժական փորձաքննությունը կազմակերպվում է հանձնաժողովային կարգով:** Հանձնաժողովի կազմում, պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից բացի, որպես անդամ ընդգրկվում են նաև մեկական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումից: Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝*

³ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, հոդված 13



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

*Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և Հայաստանի
Հանրապետության ոստիկանության պետի ներկայացմամբ:*



6. Փորձաքննության մարմինների ձևավորմանն ու գործունեությանն առաջադրված սկզբունքներն ու պայմանները

«Հոգերուժական օգնության մասին» ՀՀ օրենքը սահմանում է՝ հոգեկան խանգարման ախտորոշումը և բուժումն իրականացվում են **միջազգային բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան** և չեն կարող հիմնվել հասարակության ընդունած բարոյական, մշակութային, քաղաքական կամ կրոնական արժեքների հետ քաղաքացու անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ անմիջական կապ չունեցող այլ պատճառների վրա (հոդված 14):

1991 թվականին ՄԱԿ-ի կողմից հաստատվել է **«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և հոգերուժական օգնության բարելավման սկզբունքների» վերաբերյալ որոշումը**, որը սահմանում է դրույթներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության և նրանց բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ: Լինելով իրավաբանորեն ոչ պարտադիր՝ այն համարվում է «հոգեկան հիվանդություններով տառապող անձանց իրավունքների պաշտպանության՝ միջազգային մակարդակում գոյություն ունեցող առավելագույնս ամբողջական ստանդարտների ամբողջություն»⁴: Այդ սկզբունքները ուղղված են հետևյալ հիմնական հարցերի արտացոլմանը.

- 1) հոգեկան հիվանդության սահմանում,
- 2) բժշկական գաղտնիքի ապահովում,
- 3) բուժման և խնամքի ստանդարտներ, ներառյալ պարտադիր հոսպիտալացում և բուժման համաձայնության տրամադրում,
- 4) հոգերուժարանում հիվանդների իրավունքների պաշտպանություն,
- 5) երեխաների իրավունքների պաշտպանություն,
- 6) համայնքի դերը հոգեկան առողջության խնդիրներով անձանց բուժման և խնամքի հարցում և այլն:

⁴ The Case of Victor Rosario Congo, Inter-American Commission on Human Rights Report 29/99, Case 11,427, Ecuador, adopted in Sess. 1424, OEA/Ser/L.V/II. Doc. 26, March 9, 1999, para. 54.



ՄԱԿ-ի սույն ստանդարտների հիման վրա Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը սահմանել է այն հիմնական 10 սկզբունքները, որոնք պետք է արտացոլվեն ազգային օրենսդրության մեջ:

Հոգեկան առողջության օրենսդրություն. 10 հիմնական սկզբունքներ

1. Հոգեկան առողջության պահպանում և հոգեկան հիվանդությունների կանխարգելում
2. Հիմնական հոգեկան առողջության ծառայությունների հասանելիության ապահովում
3. Հոգեկան առողջության գնահատում միջազգային ստանդարտներին համապատասխան
4. Առավել նվազագույն սահմանափակող հոգեկան առողջության ծառայությունների տրամադրում
5. Ազատության/անկախության տրամադրում
6. Ազատության օժանդակման իրավունք
7. Վերանայման մեխանիզմների ընթացակարգեր
8. Հաստատված պարբերական վերանայման մեխանիզմներ
9. Որակավորված որոշում կայացնող մասնագետներ
10. Օրենքի կիրարկում

Սկզբունք (լատ.principium-հիմք,սկզբնահիմք) եզրույթը մեկնաբանվում է որպես դեկավար գաղափար,վարքագծի ընդհանուր կանոն, որն ընկած է որևէ համակարգի հիմքում: Ներպետական օրենսդրության մեջ հոգեբուժական փորձաքննության սկզբունքների բացակայությունը վտանգի տակ կարող է դնել վերջինիս օբյեկտիվությունը և օրինականությունը՝ հեշտությամբ հոգեբույժ-փորձագետին վերածելով «սպիտակ համազգեստով դատավորի»: Իսկ պրակտիկայի նման բացասական հետևանքները ամենաանմիջական ձևով առնչվում են մարդու իրավունքներին և շարունակվում են ենթարկվել քննադատության ժողովրդավարական կողմնորոշում ունեցող հասարակություններում:

Հետևաբար, սկզբունքների որոշակի շրջանակի ամրագրումը ներպետական օրենսդրությամբ կարևոր երաշխիք է նշված ոլորտում միասնական պրակտիկայի ձևավորման համար:

Տեսության մեջ առանձնացվում են 10 հիմնական սկզբունքներ, որոնք պետք է ընկած լինեն հոգեբուժական փորձաքննություն իրականացնող մարմինների գործունեության հիմքում⁶:



1. Հոգեկան առողջության կանխավարկածի սկզբունք
2. Ազատ համաձայնության սկզբունք
3. Օրինականության սկզբունք
4. Անկախության սկզբունք
5. Օբյեկտիվության սկզբունք
6. Իրավագործության սկզբունք
7. Անմիջականության սկզբունք
8. Հետազոտության լրիվության սկզբունք
9. Տվյալների համաձայնության սկզբունք
10. Եզրակացությունների հիմնավորվածության սկզբունք

Հոգեկան առողջության կանխավարկածը ենթադրում է, որ յուրաքանչյուր անձ պետք է համարվի հոգեպես առողջ և ունակ ընկալելու իր գործողությունները և ղեկավարել դրանք, եթե հակառակը ապացուցված չէ: Բացի այդ, այս կանխավարկածը հանդիսանում է ապացուցման գործնթացի և փաստերի հավաստիության կարևոր էլեմենտ:

Ազատ համաձայնության սկզբունքից բխում է, որ ոչ ոք առանց իր ազատ արտահայտված համաձայնության չի կարող ենթարկվել բժշկական, գիտական կամ այլ փորձաքննության: Այս պահանջն ամրագրված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածում: Համաձայնությունը կարող է առկա լինել, եթե այն տրվել է գիտակցված և իրավիճակին լրիվ իրազեկ լինելու դեպքում: Հայտնի է նաև, որ փորձաքննության ենթակա անձանց մի մասը, ունենալով հոգեկան ծանր խնդիրներ, ի վիճակի չեն ընկալել և ղեկավարել իրենց գործողությունները: Նման դեպքում համաձայնությունը կարող է տրվել օրենքով սահմանված կարգով նման իրավասություն ունեցող անձի կողմից:

Օրինականության սկզբունքը ենթադրում է, որ փորձաքննություն իրականացնող մարմինը պարտավոր է գործել օրենքին համապատասխան: Դա իր հերթին նշանակում է, որ օրենքը պետք է արտահայտի հոգեկան առողջության կանխավարկածը, այսինքն՝ այն այնպես պետք է կարգավորի փորձաքննության անցկացման կարգը, նշանակությունը և արդյունքների գնահատումը, որ հնարավորություն տա գործնթացի արդյունքում ստանալ գիտականորեն հիմնավորված, հավաստի և ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր:



Անկախության սկզբունքը ենթադրում է, որ փորձագետը անկախ է իր որոշումներում և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է միայն իր գիտելիքներով և իր իրավասության շրջանակներում առկա իրավական նորմերով:

Իրավագործության սկզբունքի համաձայն փորձագետի պատրաստվածության աստիճանը և բնույթը պետք է համապատասխանի իրեն վերապահված փորձաքննության բարդության աստիճանին և բնույթին: Փորձագետի կողմից ստացվող տեղեկատվությունը չի կարող ստացվել այլ կերպ, քան գիտականորեն հիմնավորված և վավերացված մեթոդներով: Բացի այդ փորձագետի իմացության մակարդակը նրա անկախությունը երաշխավորող կարևորագույն տարրերից է: Անհամապատասխանությունը գործի բարդության և փորձագետի գիտելիքների միջև կարող է հանգեցնել ոչ հավաստի արդյունքների ստացման:

Համաձայն հետազոտության ամբողջականության սկզբունքի՝ փորձագիտական գործնթացին մասնակցող անձինք պետք է ձեռնարկեն իրենց հասանելի և իրավական նորմերով սահմանված բոլոր միջոցները հետազոտության ամբողջականությունն ապահովելու համար: Հետազոտության ոչ լրիվությունը միշտ կասկածի տակ է դնում վերջինիս հավաստիությունը և կարող է հիմք հանդիսանալ կրկնակի փորձաքննություն նշանակելու համար:

Տվայլների համաձայնության սկզբունքը ենթադրում է, որ փորձագետի եզրակացությունները հիմնվում են, այնպիսի տվյալների վրա, որոնք ստացվում են հնարավորինս շատ օբյեկտների հետազոտության արդյունքում, որոնք պետք է համաձայնվեն ինչպես միմյանց, այնպես էլ գործող դիագնոստիկական ստանդարտների հետ: Այս սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ հետազոտման օբյեկտները միշտ մի քանիսն են լինում:

Եվ վերջապես հիմնավորվածության սկզբունքի համաձայն՝ փորձագետի ոչ մի որոշում չունի ապացուցողական նշանակություն, եթե այն հիմնված չէ փաստերի վրա և հիմնավորված չէ: Այս սկզբունքն արտահայտում է փաստարկման տեսության դրույթները, մասնավորապես ապացուցման կառուցվածքը՝ թեզիս, փաստարկներ և դեմոնստրացիա: Որպես թեզիս հանդես է գալիս փորձագիտական եզրակացությունը, որի հավաստիությունը փորձագետը պարտավոր է ապացուցել, որպես փաստարկ՝ այն տվյալները, որը նա ստացել է հետազոտության օբյեկտներն ուսումնասիրելիս, իսկ դեմոնստրացիան այն ձևն է, որով փորձագետը



հիմնավորում է իր եզրակացությունը: Բացի այդ փորձագետի ներքին համոզմունքը, հիմնված ինտուիցիայի վրա, չունի ապացուցողական նշանակություն և չի կարող դրվել եզրակացության հիմքում:

7. Ի՞նչ մեթոդներով է իրականացվում կամ պետք է իրականացվի փորձաքննությունը

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ բժիշկը պարտավոր է հոգեկան խանգարումով տառապող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, **մեթոդաբանության**, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին: Դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում) կատարվում է գրանցում:

Բացի այդ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածն ամրագրում է, որ

1. Անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո փորձագետը կազմում է գրավոր եզրակացություն և հաստատում է այն իր ստորագրությամբ, որն ուղարկվում է փորձաքննություն նշանակող անձին:

2. *Փորձագետի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝* երբ, որտեղ, ում կողմից (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը) և ինչի հիման վրա է կատարվել փորձաքննությունը, ովքեր են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, **ինչպիսի մեթոդներ են կիրառվել**, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ:

Օրենսդիրը չի սահմանում, թե կոնկրետ ինչ մեթոդներով է իրականացվում փորձաքննությունը և դա պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքնչյուր կոնկրետ դեպք պահանջում է անհատական մոտեցում և դրան համապատասխան մեթոդների կիրառում, սակայն որպես ընդհանուր երաշխիք պետք է նշել, որ հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը երաշխավորվում է օրենքի, մարդասիրության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:



Հոգեբուժական փորձաքննության մեջ կիրառվող մեթոդները պետք է լինեն օբյեկտիվ, հիմնավորված, կանխատեսելի, ինչպես նաև հուսալի, ինչն էլ իր հերթին ենթադրում է արդյունքների ճշտությունն ու կայունությունը: *Անորոշ և գիտականորեն չփորձարկված մեթոդների կիրառումը համարում է անթույլատրելի:*

Տեսության մեջ ընդունված մեթոդներից է կենսագրական մեթոդը, որն օգտագործվում է անձի կենսափորձի ամբողջական պատկերը կազմելու և նրա հոգեկան աշխարհի վերլուծության նպատակով: Դատահոգեբուժական փորձաքննությունում ախտորոշման առավել գործածվող ձևը թեստերի մեթոդն է: Օգտագործվում են բանականության, անձնային և այլ թեստեր:

8. Փորձաքննության մարմինների կազմին առաջադրվող պահանջները

Ինչ վերաբերում է փորձաքննության մարմինների կազմին առնչվող պահանջներին, ապա չկա որևէ իրավական ակտ, որը սահմանում է նշված մարմինների կազմին առնչվող պահանջները: Սակայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի որոշ նորմերի համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել որոշ պահանջներ: Մասնավորապես, օրենքը սահմանում է, որ հոգեբուժական օգնությունն իրականացնում են համապատասխան **որակավորում, բարձրագույն բժշկական կրթություն ունեցող բժիշկ-հոգեբույժները** և օրենքում օգտագործվող հասկացությունների շարքում տալիս դրանց մեկնաբանությունը: Այսպես, **հոգեբույժ՝** բարձրագույն բժշկական կրթություն և որակավորում ստացած և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հոգեբուժական օգնություն իրականացնող ֆիզիկական անձ:

բժշկական (կլինիկական) հոգեբան՝ բարձրագույն հոգեբանական կրթություն ստացած և հոգեկան առողջության ոլորտում հետդիպլոմային կրթություն ստացած բժշկահոգեբանական ծառայություններ իրականացնող ֆիզիկական անձ:

Բացի այդ, նշում է, որ հոգեբուժական օգնություն իրականացնելիս հոգեբույժն անկախ է իր կայացրած որոշումներում և ղեկավարվում է բժշկական պարտքի զգացումով ու սույն օրենքով: Անձի հոգեկան առողջության վերաբերյալ այլ բժիշկ-մասնագետի (ոչ հոգեբույժի) եզրակացությունը հիմք չէ անձին հոգեկան հիվանդ ճանաչելու համար:

Հարկ է նշել նաև, որ *Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec(2004) 10 առաջարկությունները անդամ երկրներին հոգեկան խանգարումներ ունեցող անձանց մարդու իրավունքների և արժանապատվության վերաբերյալ* սահմանում են որոշակի մասնագիտական չափորոշիչներ:



1. Հոգեկան առողջության (հոգեբուժական) ծառայություններում ներգրավված մասնագիտական անձնակազմը պետք է ունենա անհրաժեշտ որակավորում և պատրաստություն, ինչը նրանց հնարավորություն կընձեռի այդ ծառայություններում կատարել իրենց դերը՝ համապատասխան մասնագիտական պարտականությունների և չափորոշիչների:

2. Անձնակազմը պետք է համապատասխան պատրաստություն ստանա հատկապես հետևյալ հարցերի վերաբերյալ.

- i. հոգեկան խանգարումներ ունեցող անձանց արժանապատվության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը,
- ii. բռնությունը (ուժի կիրառումը) հասկանալը, կանխարգելելը և վերահսկելը,
- iii. շարժումները սահմանափակելը կամ մեկուսացնելու կիրառումից խուսափելու միջոցները,
- iv. այն սահմանափակ պայմանները, երբ շարժումները սահմանափակելու կամ մեկուսացնելու տարբեր մեթոդները կարող են արդարացվել՝ հաշվի առնելով դրանից հետևող օգուտները և ռիսկերը և նման միջոցների ճիշտ կիրառումը:

9. Փորձաքննության իրականացման հիմքը

Համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ 1.Բժշկական ցուցումներից ելնելով՝ հոգեբուժական կազմակերպությունները հոգեկան խանգարումով տառապող անձի նկատմամբ արտահիվանդանոցային ձևով իրականացնում են բժշկական խորհրդատվություն կամ փորձաքննություն կամ ախտորոշում կամ բուժում՝ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմելու դեպքում:

2. Տեսական (քրոնիկ) հոգեկան խանգարումներով տառապող անձի նկատմամբ, **իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն**, իրականացվում է դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն, որը ներառում է հաշվառում և շարունակական հսկողություն ու բուժում կամ սոցիալական վերականգնում կամ հոգեբուժական փորձաքննություն:

10. Ինչ ժամկետներ են առաջադրված դիմում ներկայացնելու համար

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 30-րդ գլխում որոշակի պայմաններ են առաջադրված դիմում ներկայացնելու համար, մասնավորապես, քաղաքացու՝ հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմում տալու իրավունք ունի այն



հոգեբուժական հաստատության տնօրինությունը, որում բուժվում է քաղաքացին: Դիմումը տրվում է այդ հոգեբուժական հաստատության գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան:

Դիմումին կցվում է հոգեբուժական հաստատությունում անձի հետագա գտնվելու անհրաժեշտության վերաբերյալ բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը:

Քաղաքացու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմումը տրվում է քաղաքացուն հոգեբուժական հաստատությունում տեղավորելու պահից **72 ժամվա ընթացքում**:

Դատավորը, հարուցելով գործը, դիմումը դատարանում միաժամանակ քննելու համար անհրաժեշտ ժամանակահատվածով երկարաձգում է հոգեբուժական հաստատությունում քաղաքացու գտնվելու ժամկետը:

Քաղաքացու՝ հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմումը դատավորը քննում է գործը հարուցելու օրվանից **հինգ օրվա ընթացքում**:

11. Ու՞մ է ներկայացվում փորձաքննության արդյունքները:

Համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի՝ հոգեբուժական հանձնաժողովի կամ հետազոտող բժշկի կայացրած որոշումները պետք է լինեն պատճառաբանված և պարտադիր ամրագրվեն բժշկական փաստաթղթերում: Հոգեբուժական հետազոտման տվյալները և եզրակացությունը գրանցվում են բժշկական փաստաթղթերում (**ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում**): Բացի այդ, օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են **հիվանդին** և **նրա օրինական ներկայացուցչին** նրանց պահանջով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

Միևնույն ժամանակ օրենքը պարտավորեցնում է բժշկին հոգեկան խանգարումով տառապող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել **հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին**, որոնց



վերաբերյալ բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում) կատարվում է գրանցում:

Կարևոր հանգամանք է նաև հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրազեկումը: Մասնավորապես, ըստ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարում ունեցող անձինք իրազեկվում են իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին՝ դրանց վերաբերյալ նշում կատարելով բժշկական փաստաթղթերում: Հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների **իրազեկման թերթիկի** ձևը հաստատում է առողջապահության ոլորտում լիազոր պետական մարմինը:

Հոգեկան խանգարումներով տառապող անձին իր իրավունքները բացատրվում են այն լեզվով և այն եղանակով, որը հասկանալի է տվյալ անձի համար: Ընդ որում, տվյալ իրավունքների բացատրությունը ներառում է իրավունքների ու դրանց իրականացման մեխանիզմների պարզաբանումը: Նշվածի վերաբերյալ բուժող բժիշկը կամ ընդունարանի բժիշկը կամ բաժանմունքի վարիչը գրառում է կատարում հոգեկան խանգարմամբ տառապող անձի բժշկական քարտում՝ նրա կամ նրա օրինական ներկայացուցչից (եթե անձն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչված, կամ եթե անձն անչափահաս է) վերցնելով ստորագրություն:

12. Ինչպե՞ս եւ ո՞վ կարող է բողոքարկել փորձաքննության արդյունքները

Ըստ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի՝ հոգեբուժական օգնություն և ծառայություններ իրականացնող հոգեբույժի կամ այլ մասնագետի գործողությունները կարող են բողոքարկվել **դատական կարգով**:

Օրենքի 3-րդ հոդվածը օրենքում օգտագործող հիմնական հասկացությունների շարքում բացահայտում է նաև հոգեբուժական օգնությունը, որի մաս է կազմում նաև հոգեբուժական փորձաքննությունը:

Հետեւաբար նաև հոգեբուժական փորձաքննություն իրականացնող հոգեբույժի կամ այլ մասնագետի գործողությունները բողոքարկվում են Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բողոքը ներկայացնում է **հոգեկան խանգարում ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը**՝ օրենքով սահմանված կարգով:



13. Ո՞վ կարող է պահանջել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն

Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն (այդ թվում դատահոգեբուժական) նշանակելու հարցը ներպետական օրենսդրությամբ կարգավորվում է դատավարական իրավունքի նորմերով:

Ընդհանուր առմամբ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունը նշանակում է վարույթն իրականացնող մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում:

14. Փորձաքննության վերանայման կարգն ու պայմանները

Օրենսդրության մեջ բացակայում է «փորձաքննության վերանայում» հասկացությունը, այնուամենայնիվ, փորձաքննության արդյունքները, ըստ էության, վերանայվում են լրացուցիչ կան կրկնակի փորձաքննության անցկացմամբ, որը օրենքով սահմանված դեպքերում կարող է իրականացնել այլ մարմին, քան նախորդը: Այնուամենայնիվ բացակայում է որոշակի ժամանակ անցնելու ուժով փորձաքննության վերանայում սահմանող օրենսդրական դրույթը, մինչդեռ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության սահմանած հոգեկան առողջությանը վերաբերող 10 հիմնական սկզբունքների շրջանակներում նախատեսված է նաև հաստատված պարբերական վերանայման մեխանիզմների առկայությունը (սկզբունք 8):

Այս սկզբունքն իրենից ենթադրում է, որ այնպիսի որոշման դեպքում, որը երկարաժամկետ սահմանափակում է անձեռնմխելիությունը (բուժում) և/կամ ազատությունը (հոսպիտալացում), պետք է առկա լինի պարբերական ավտոմատ վերանայման մեխանիզմ:

Այս սկզբունքի բաղադրատարրերն են՝

- Վերանայումը պետք է տեղի ունենա ավտոմատ
- Վերանայումը պետք է տեղի ունենա ողջամիտ ինտերվալներով
- Վերանայումը պետք է իրականացվի ի պաշտոնե գործող իրավասու մարմնի կողմից



Եզրահանգումներ

Հոգեկան առողջության ներպետական օրենսդրության առկայության կարևորությունը շեշտվում է բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, այնուամենայնիվ ոչ բոլոր երկրներն ունեն այդպիսի իրավական ակտեր:

Ներպետական օրենսդրության առկայությունը, որը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, ամենակարևոր ձևերից է, որով պետությունը կարող է կատարել իր պարտականությունը հոգեկան խանգարումներով տառապող անձանց առջև՝ գոյություն ունեցող միջազգային ստանդարտներին համապատասխան: Յուրաքանչյուր պետություն պետք է վերանայի ներպետական օրենսդրությունը սահմանված միջազգային ստանդարտներին համապատասխան, հատկապես այն դեպքում, երբ այն կարգավորում է պետական մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից հոգեկան խանգարումներով տառապող անձանց նկատմամբ իշխանության կիրառման և հայեցողության շրջանակները: 1993 թ. Վիեննայի մարդու իրավունքների միջազգային կոնֆերանսը կրկին շեշտեց այն հանգամանքը, որ հոգեկան և ֆիզիկական հիվանդություններով տառապող մարդիկ պաշտպանված են միջազգային իրավունքի նորմերով և որ պետությունները պետք է ստեղծեն ներպետական օրենսդրություն այդ իրավունքների իրականացման համար: Փաստաթղթում, հետագայում հայտնի որպես «Վիեննայի դեկլարացիա», Համաշխարհային Կոնֆերանսն ամրագրեց, որ «բոլոր մարդկանց իրավունքները և հիմնարար ազատությունները համընդհանուր են և հետևաբար անխոս ընդգրկում են հոգեկան հիվանդություններով տառապող անձանց»⁶:

Համաձայն Մարդու իրավունքների համաշխարհային կոնֆերանսի առաջարկությունների ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց նոր որոշում «Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ստեղծման ստանդարտ կանոններ» («Ստանդարտ Կանոններ»): Այն միջազգային նոր հեղափոխական գործիք է, քանի որ սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքացիական մասնակցությունը՝ որպես միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունք: Այս իրավունքի իրականացման համար պետությունները պարտավոր են ստեղծել հնարավորություններ հաշմանդամ անձանց և այդպիսի անձանցից կազմված կազմակերպությունների համար ներգրավված լինելու

⁶ Vienna Declaration and Program of Action, World Conference on Human Rights, Vienna, 14-25 June 1993, U.N. Doc A/CONF.157/24, para. 63.



իրավական ակտերի նախագծմանը այն հարցերով, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց:⁷

Ինչպես տեսանք, ՀՀ օրենսդրության մեջ հոգեկան առողջության վերաբերյալ առկա ակտերից առանձնահատուկ տեղ է գրավում «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը, որն առանձնացնում է «հետազոտություն» և «փորձաքննություն» հասկացությունները: Վերջինս կարող է նշանակվել «գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով»⁸: Փորձաքննության տեսակ է նաև հոգեբուժական փորձաքննությունը և առանձնացնելով այդ ոլորտում ծագող բազմաթիվ իրավահարաբերությունները՝ կարելի է ասել, որ առավելագույնս կարգավորված է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտը: Դրա մասին են վկայում ՀՀ Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության առկայությունը, որի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատել է ՀՀ Կառավարությունը⁹, այն, որ համապատասխան փորձաքննության կարգը հաստատված է ՀՀ Կառավարության որոշմամբ¹⁰, ինչպես նաև այլ իրավական ակտերի առկայությունը: Մինչդեռ, ինչ վերաբերում է հոգեբուժական փորձաքննության մյուս տեսակներին, դրանք ակնհայտորեն կարգավորված են ոչ բավարար չափով: Բացակայում են հստակ կարգավորումներ տարբեր հարցերի վերաբերյալ, որոնց անդրադարձ կատարեցինք այս հետազոտության շրջանակներում:

ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման եվ բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությանը եվ ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին ՀՀ Կառավարության նիստի արձանագրության քաղվածքում նշվում է՝ «51. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի թիվ 276-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվող բժշկական օգնության և սպասարկման տեսակներում սահմանված են նաև հոգեբուժական, հոգեթերապևտիկ տեսակները:

Միաժամանակ «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն 2004 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության դեկտեմբերի 9-ի N 1686-Ն որոշմամբ սահմանված է հոգեբուժության ոլորտում թույլատրվող բժշկական օգնության և սպասարկման տարատեսակների ավելի ընդգրկուն ցանկ, որտեղ

⁷ Standard Rule 15(1)(emphasis added).

⁸ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք

⁹ ՀՀ Կառավարության 14 նոյեմբերի 2002թ. որոշումը ՀՀ Աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության ՀՀ Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու եվ ՀՀ Կառավարության 1998 թվականի նոյեմբերի 3-ի N 684 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

¹⁰ ՀՀ Կառավարության 2 մարտի 2006թ «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 276-Ն որոշում



ներառված է ինչպես դատահոգեբուժական փորձաքննությունը, այնպես էլ ըստ իրականացման ձևի՝ արտահիվանդանոցային կամ հիվանդանոցային, սահմանված են հոգեկան խանգարումներով տառապող անձանց հետազոտությունը և բուժումը, հոգեկան խանգարումներով տառապող անձանց դիսպանսերային շարունակական հսկողությունը, սահմանային վիճակներում գտնվող անձանց խորհրդատվական հսկողությունը, հոգեբույժի մոտ հոգեկան խանգարումներով տառապող անձանց հսկողությունը, հոգեկան առողջության վերականգնումը և այլն:

Պետք է նշել, որ «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը լիարժեք ձևով չի կարգավորում հոգեբուժական ծառայությունների ոլորտի հարաբերությունները: Այսպես, օրենքի 3-րդ հոդվածում սահմանվում են հոգեբուժական մի շարք ծառայությունների («հիվանդանոցային, արտահիվանդանոցային, դիսպանսերային ծառայություններ, հոգեբուժական կազմակերպություն, ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք, հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք») հասկացություններ, սակայն այդ ստորաբաժանումներում իրականացվող ծառայությունների շրջանակը, կարգը, պայմանները, օրենքով հստակեցված չեն:

Դրանք սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի թիվ 350-Ն որոշմամբ, որով սահմանվում են արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական օգնության շրջանակները, ծավալները, հոգեկան խնդիրներ ունեցող անձանց դիսպանսերային հսկողության կարգը, հոգեբուժական վկայարկման, հիվանդների ընդունելության, դուրս գրման, այլ հաստատություններ տեղափոխման և այլ հարաբերություններ:

Մեկ այլ խումբ կարևոր հարաբերությունների շրջանակ, մասնավորապես՝ դատահոգեբուժական փորձաքննությունների իրականացման կարգը, դեռևս սահմանված չէ, սակայն «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ այն սահմանելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Ներկայումս այն իրականացվում է ընդհանուր կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված ընթացակարգերով:

Միաժամանակ նույն փաստաթղթում սահմանված է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման եվ բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկ, որն ունի հուսադրող բովանդակություն: